

Քրիստինե Գրիգորյան  
Մեսրոպ Մաշտոց Համալսարան  
Արցախ

**Ամփոփում**

*Կրկնաստեռությունը պայմանավորված է լեզվի պատմական զարգացումով, պատմականորեն փոփոխվող կարգ է, տարբեր ժամանակահատվածներում տարբեր դրսևորումներ ունի: Այն բնորոշելիս պետք է հաշվի առնել լեզվի զարգացման տվյալ շրջանը, որովհետև անցյալում որևէ կրկնաստեռ բայ կարող է կորցնել սեռային հատկանիշներից մեկը՝ հետագայում ներկայանալով իբրև միաստեռ բայ, և, ընդհակառակը, արդի շրջանում կրկնաստեռություն դրսևորող բայը կարող է անցյալում միաստեռ եղած լինել: Լինում են նաև բայեր, որոնց մեջ կրկնաստեռությունն անցյալից եկել և պահպանվում է մինչև այժմ:*

**Բանալի բառեր՝** կրկնաստեռ բայեր, ներգործական սեռ, չեզոք սեռ, անցողական հատկանիշ, անանցողական հատկանիշ, սեռային տեղաշարժեր, սեռային զուգահեռություններ:

Ժամանակակից հայերենում կան մի շարք բայեր, որոնց սեռային հատկանիշը միատարր չէ: Այդ բայերը միևնույն բայական բառաձևի մեջ միաժամանակ համատեղում են երկու սեռ՝ առաջ բերելով սեռային զուգահեռություններ: Նման բայերը կոչվում են կրկնաստեռ բայեր, իսկ երևույթը՝ կրկնաստեռություն:

Կրկնաստեռության երևույթը քերականորեն բնորոշել և մանրամասն քննել է Աշոտ Աբարահամյանն իր՝ «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ, որտեղ համապատասխան փաստերի ու բազմաթիվ օրինակների համադրությամբ տվել է կրկնաստեռության և կրկնաստեռ բայերի գիտական բնութագրումը: Աշխատությունը հիմք է հանդիսացել մեր տեսական նյութի համար, որտեղ քննել ենք կրկնաստեռության՝ միայն ներգործական – չեզոք տեսակը: Ա. Աբրահամյանը նշում է, որ կրկնաստեռության դրսևորման ժամանակ բայը միևնույն բառաձևի սահմաններում համատեղում է երկու սեռի քերականական առանձնահատկություններ՝ առանց բառաքերականական լրացուցիչ փոփոխությունների: Նա կրկնաստեռությունը սահմանում է հետևյալ կերպ. «Կրկնաստեռ են այն բայերը, որոնք բառարանային միավոր հանդիսացող բայական մի ընդհանուր բառույթի մեջ այս կամ այն չափով պարունակում են երկու սեռի՝ ներգործականի և չեզոքի հատկանիշներ» [1, էջ 703]:

Հարկ ենք համարում միաժամանակ նշել Ա. Աբրահամյանի բերած այն հիմունքները, որոնց միջոցով պարզ է դառնում, թե կրկնաստեռության երևույթն ինչպես է առաջ եկել և ինչպիսի դրսևորումներ ունի արդի հայերենում: Այդ հիմունքները կրկնաստեռության իմաստային և քերականական դրսևորումների հիմնական միջոցներն են:

Կրկնաստեռության մի քանի դրսևորումներից ամենաբնորոշն ու տարածվածը իմաստային կրկնաստեռությունն է, երբ բայի բառական իմաստի փոփոխություններն ու տարբերությունները առաջ են բերում սեռային փոփոխություններ ու տարբերություններ: Այս դեպքում անժխտելի է այն փաստը, որ միևնույն բայի քերականական հատկանիշների մեջ առկա են սեռային զուգահեռություններ:

Նկատելի է, որ գրական հայերենում կրկնասեռ բայերի թիվն այնքան էլ մեծ չէ, դրանք ավելի շատ գործածական են խոսակցական լեզվում: Եվ պատահական չէ, որ գեղարվեստական գրականության մեջ այդ բայերը ավելի հաճախ են հանդիպում այն գրողների ստեղծագործություններում, որոնց լեզվաճին բնորոշ է ժողովրդական բառ ու բանը (Ա. Բակունց, Հ. Մատթևոսյան և այլք), ուստի համապատասխան օրինակները բերել ենք այս հեղինակների ստեղծագործություններից: Այսպես՝ ներքոնշյալ բայերը չեզոք սեռի են, բայց կարող են ուղիղ խնդիր ստանալ և գործածվել ներգործական սեռի իմաստով: *Շնչել*. «Ծերունին արխալուղի կոճակներն արձակել ու խոր շնչում էր» [3, էջ 115] – չեզոք: «...Նա ազահաբար շնչում էր անտառից եկող թարմությունը» [3, էջ 136] – ներգործական: *Աշխատել*. «Մեր ծանոթը գոհունակությամբ նկատեց, որ իր ժամացույցը ճիշտ է աշխատում» [3, էջ 263] – չեզոք: «...Գործարանում ու գյուղում ես բավական փող էի աշխատել» [4, էջ 137] – ներգործական: *Ապրել*. «Նրա մտքովն անցավ, որ որդին, հարսն ու թոռը գյուղում չեն ապրելու» [3, էջ 84] – չեզոք: «Աշուն է, թեթև քամի, այգին տերևաթափ է ապրում» [4, էջ 33] – ներգործական: Այսպես նաև *նայել*, *փչել*, *տեղալ*, *սովորել*, *հոգալ*, *պարապել* և այլ բայեր իրենց կիրառությամբ չեզոք են, բայց կարող են ուղիղ խնդիր ստանալ և ձեռք բերել ներգործական սեռի իմաստ:

Ներգործական սեռի բայերը չեզոք սեռի նշանակությամբ կիրառվում են հիմնականում այն ժամանակ, երբ արտահայտում են անընդհատ կրկնվող, սովորություն դարձած գործողություն: Այդպիսի բայերից են *լսել*, *խմել*, *խփել*, *եփել*, *կեղծել*, *խորհել*, *հիշել* և այլ բայեր, որոնք հիմնական կիրառությամբ ներգործական սեռի են, բայց կարող են միևնույն ժամանակ գործածվել չեզոք սեռի իմաստով: *Լսել*. «Գալիս է, նստում փայտե նստարանին, լսում սարյակների ճովողությունը, մանուկների ուրախ կանչերը» [3, էջ 229] – ներգործական: «Մինչ այդ գլուխը կախ լսում էր» [3, էջ 44] – չեզոք: *Պրծնել* բայը (բարբառային երանգով) ևս կրկնասեռ է, քանի որ այն բազմազան երանգներ ունի՝ արտահայտելով «վերջանալ», «պոկ գալ», «ազատություն ստանալ, դուրս գալ և ավարտել» իմաստները: Այստեղից էլ առաջանում է սեռի երկփեղկում. այսպես՝ «ավարտել» իմաստով ներգործական է, ինչպես՝ «...Էդ քաղաքի ժողովրդի հետ գործը պրծի, մենք էստեղ ենք» [4, էջ 351]: Իսկ հետևյալ նախադասության մեջ այն հանդես է գալիս չեզոք սեռի նշանակությամբ, ինչպես՝ «*Պրծել է*, հարսի ոտնաձեն, սրտի թայրտոց, աղջկա ծիծաղ՝ եղած-չեղածը լսել պրծել է» [4, էջ 203]:

Արդի հայերենում կան բայեր էլ, որոնց մեջ հավասարազոր են ներգործական և չեզոք սեռերի իմաստները: Այդպիսի բայերից են՝ *սուլել*, *շնչել*, *երգել*, *արածել*, *ըմպել*, *շնջալ* և այլն: *Սուլել*. «Շոգեմեքենան սուլում է. քամին բերում է նրա խուլ փնչոցը» [3, էջ 173] – չեզոք: «Ընկերս կամաց սուլում է մի երգ և ձիու քայլերի համեմատ թամբի վրա օրորում» [3, էջ 115] – ներգործական: *Շնջալ*. «Սիմոնը աչքերը լցված կանգնել էր ու շնջում էր այդ տեսիլքի դեմ, որ կարծես երազ լինի» [4, 157] – չեզոք: «... Հիշում էր նրանց մայրերին և ոմանց *անունը շնջում...*» [3, էջ 432] – ներգործական:

Բայի սեռային երկակի կիրառության դեպքեր նկատվում են ոչ միայն իմաստաբանության, այլև ձևաբանության և շարահյուսության ոլորտներում, ինչը հիմք է տալիս առանձնացնելու նաև կրկնասեռության քերականական դրսևորումները:

Ըստ Ա. Աբրահամյանի խմբավորման՝ կրկնասեռության քերականական դրսևորումներ են.

1. Կրկնասեռություն՝ կապված խնդրառական-սեռային տեղաշարժերին, երբ սեռային տեղաշարժեր են առաջանում սեռի և խնդրառական փոփոխության հիման վրա:
2. Կրկնասեռություն՝ բայի արտահայտած գործողության հիմնական հատկանշող բնույթի ակտիվացման և եղածի հետ համատեղվելու հիման վրա:

3. Կրկնաստեռություն՝ գործողության անցման լիակատար և մասնակի բնույթի հիման վրա:

4. Կրկնաստեռություն՝ կապված բայի լծորդության փոփոխությանը: Այս հիմունքով կրկնաստեռ բայեր առաջանում են լծորդության պատմական փոփոխության և նույնացման հիման վրա:

Խնդրառությանը կապված կրկնաստեռությունը, անշուշտ, առնչվում է իմաստային կրկնաստեռությանը, քանի որ սեռային տեղաշարժեր են կատարվում նաև բառիմաստի փոփոխություններով պայմանավորված: Սեռային անցումներ կատարվում են ոչ միայն գրաբարից ժամանակակից հայերեն, այլև ժամանակակից հայոց լեզվում: Նման անցումներ լինում են հիմնականում չեզոք սեռից ներգործական սեռ, այսինքն՝ բայը անանցողականից դառնում է անցողական, կամ հակառակը՝ ներգործական սեռից չեզոքի: Հարկ է նկատել, որ այս կրկնաստեռ բայերը ծագել են ոչ թե պատահական փոփոխության հետևանքով, այլ ունեն գարգացման տևական բնույթ:

Ինչպես գիտենք, ժամանակակից հայերենում չեզոք սեռի բայերը նախադասության մեջ սովորաբար ընդունում են տրական հոլովով խնդիր, բայց կան մի շարք չեզոք սեռի բայեր, որոնց գործողության հանգումային գաղափարը դառնում է ուղղակի անցումային և դրսևորում ներգործական սեռի հատկանիշ: «Այդ բայերի գործողության բնույթը հիմք է հանդիսացել, որ քերականական նմանությամբ այս բայերի մի մասը ընդունի ոչ միայն հանգման խնդիր, այլև դրան զուգահեռ՝ նաև ուղիղ խնդիր, որը ի վերջո հանգեցնում է չեզոք սեռ > ներգործական սեռ սեռային տեղաշարժի» [2, էջ 307]: Օրինակ՝ *հսկել* բայը. «Միայն Իվան բեյն էր կես գիշերին արթուն պահակի պես *հսկում* քնած *քաղաքին*» [3, էջ 58]: «... Տիտոսին կոլովել են շորերի մեջ, փափախի բրդի տակ ծակեր թողել, որ նրա ժիր աչքերը *հսկեն հորթերին*» [3, էջ 137]: Այս նախադասություններում *հսկել* բայն ընդունել է տրական հոլովով անուղղակի խնդիր (քաղաքին, հորթերին): Մինչդեռ հաճախ գործողությունը կարող է դառնալ ուղղակի անցումային, նման դեպքերում բայը պահանջում է ուղիղ խնդիր՝ դրսևորելով ներգործական սեռի անցողականության հատկանիշ: Օրինակ՝ «Գիշերապահների կրակը հսկում էր նրանց անվրդով քունը» [3, էջ 233]: Այսինքն՝ *հսկել* բայը հանդես է գալիս ներգործական սեռի նշանակությամբ՝ ունենալով անցողական հատկանիշ, բայց և ունի չեզոք սեռի անանցողական հատկանիշ: Այսպիսի բայերից են՝ *կարոտել, գրոհել, ունկնդրել, տիրել, հուսալ, դիմավորել, ծափահարել, ձեռնարկել, գերազանցել* և այլն: Օրինակ՝ «... Տղան արդեն *կարոտեց* ձորին» [4, էջ 258] – չեզոք: «Մեսրոպը *կարոտում էր* ամռան *ձայները*» [4, էջ 334] – ներգործական: «Կարմիր բանակայինները *գրոհում են*» [3, էջ 560] – չեզոք: «... Նրանք հովտում էին, *գրոհում էին* Ձնծաղիկի *բլուրը*» [4, էջ 421] – ներգործական:

Ինչպես վերը նշեցինք, սեռային տեղաշարժերը հիմնականում լինում են չեզոքից ներգործական, բայց լինում է նաև հակառակը՝ ներգործականից չեզոք: Օրինակ՝ *ողջունել* բայը ներգործական սեռի է, ինչպես՝ «Խոր հիացքով մի ու խինդով խոր Ես *ողջունեցի* այգը երկրիս...» [5, էջ 158]: Այն ունի նաև չեզոք սեռի կիրառություն, ինչպես՝ «Ամպերը որ հեռացան, նրանք զիլ ու բարձրաձայն *ողջունեցին* արևին» [4, էջ 118]: *Ափսոսալ* բայը. «... Ամեն իրիկուն իր տան բանալիներին նայելիս *ափսոսում էր* տանը թողած *իրերը*» [3, 131էջ] – ներգործական: «Նա ծառ շատ էր սիրում և մինչև անգամ *ափսոսում էր* դալար ճյուղին» [3, էջ 477] – չեզոք:

Արդի հայերենում խնդրառությամբ պայմանավորված կրկնաստեռություն դրսևորում են նաև հետևյալ բայերը՝ *այցելել, գլխավորել, զարկել, զիջել, իշխել, պաշատել, սպառնալ, սպասել, տիրել, փսփսալ* և այլն:

Ամփոփելով սեռային տեղաշարժերի մասին ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ չեզոք սեռից ներգործականի անցումը պայմանավորված է ուղղական խնդրառությամբ, իսկ հակառակ անցումը, ըստ Ա. Աբրահամյանի, «ուղիղ խնդրի պահանջի անբնականությամբ կամ նույնպես չեզոք սեռի բայերին հատուկ անուղղակի – առարկայական խնդրառությամբ» [1, էջ 703]:

Ժամանակակից հայոց լեզվում չեզոք սեռի շատ բայեր, որոնք ունեն քերականական իմաստի ինքնամփոփ բնույթ, երբեմն ակտիվ բնույթ են ստանում՝ առաջ բերելով անցման գաղափար և ստեղծում են սեռային երկփեղկում: Այսպիսի բայերից են՝ *բուրել, դոփել, շնչել, տեղալ, ցայտել, ժայթքել* և այլն, որոնք իրենց հիմնական նշանակությամբ չեզոք սեռի են, սակայն ունեն նաև ուղղակի անցման գաղափար, ուստի նաև ներգործական են: Գեղարվեստական գրականությունից բերենք երկրորդ կիրառության օրինակներ. «Վառարանը դեռ *կրակ ու կերակուր չէր բուրում*» [4, էջ 469]: «Գյուղը լուռ էր, և միայն ներս խուժողների ձիերի սմբակներն *էին դոփում* խճած ուղիին» [3, էջ 222]: «Նա ազահաբար *շնչում էր* անտառից եկող *թարմությունը*» [3, էջ 136]: «Ամպերը ձյունի *փաթիլներ տեղացին*» [3, էջ 264]: «Կամուրջն անցան, գետը *ցայտում էր սառնություն ու հոգնություն*» [4, էջ 190]: «Եթե *կատաղությունը* մեր վրա *չժայթքեր*, թերևս չլինայեր նույնիսկ հալևորին» [4, էջ 326]:

Ա. Աբրահամյանը նշում է, որ գործողության ինքնամփոփ և ակտիվ բնույթների՝ մի բայաձևում համատեղվելու հիման վրա սեռային զուգահեռություն ունեն նաև այլ բայեր՝ *թքել, խաղալ, պարել, մրմնջալ, շնչալ, փնթփնթալ, սուլել, փսփսալ, քրթմնջալ*, ինչպես նաև *երգել, գրուցել, խոսել, ծխել, ողբալ, սգալ, կովել, լացել* և այլն, որոնք հայցական հոլովով խնդիր են ընդունում իրենց արմատ – բառը կամ համանիշ մեկ այլ արմատական բառ: Այս երևույթը հայերենում կոչվում է ներքին խնդրառություն, ինչպես՝ *պար պարել, երգ երգել, լաց լացել, խաղ խաղալ, կռիվը կովել* և այլն: Այսպես՝ «Դու քո *կռիվն ես կովել*, իմը չես կովել...» [4, էջ 141]: «Օջախները *ծուխ չեն ծխում*...» [4, էջ 343]: «*Լաց լացեց* կինը, լացեց և Հագրոն» [3, էջ 200]: «Մեր բերանը հավաքեցինք, որ *սուլենք* իր կանչի *սուլոցը*» [4, էջ 384]: Այսպիսի բայերը կարող են որպես ուղիղ խնդիր պահանջել նաև համանիշ արմատական բառ, օրինակ՝ «Հատուկ իր համար ստեղծած մեր շվիաձայն *շվշվոցը* մենք *սուլեցինք*» [4, էջ 337]: «Դառնաղի *ողբ են երգում* գյուղի կանայք» [3, էջ 217]: «Արջերը *պար են խաղում*» [3, էջ 28]:

Ինչպես տեսանք, նշված չեզոք սեռի բայերը իրենց արմատ-բառը կամ համանիշ արմատական բառը ընդունել են որպես ուղիղ խնդիր, ուրեմն այս բայերը նման կիրառություններում ունեն ներգործական սեռի նշանակություն՝ ցուցաբերելով կրկնասեռություն:

Ժամանակակից հայերենում կան որոշ բայեր, որոնց արտահայտած գործողության անցման գաղափարը ունի երկակի բնույթ՝ մի դեպքում անցումը լիակատար է ներգործական բայերի նման, իսկ մյուս դեպքում՝ մասնակի, որի ժամանակ անցումը որոշ չափով է առնչվում գործողության առարկային: Հետևաբար այս բայերի խնդրառությունը պետք է ունենա երկակի բնույթ՝ մի դեպքում արտահայտվի հայցականով, իսկ մյուս դեպքում՝ տրականով կամ տրականի իմաստ արտահայտող կապական կառույցով: Բայերի այսպիսի առանձնահատկությունների զուգադրումը ևս որպես կրկնասեռություն պետք է դիտել: Օրինակ՝ *խանգարել* և *վնասել* բայերը. «Ձեռքը ճակատին պահեց, որ արևի շողերը ջրակալած աչքերին *չխանգարեն*» [3, էջ 159]: «Քառասնաջրից եկող առուն բոստաններին շատ է *վնասել*» [3, էջ 133]: Նշված նախադասություններում *խանգարել* և *վնասել* բայերն ունեն գործողության անցման մասնակի գաղափար, ուստի *աչքերին, բոստաններին* բառերին առնչվելով մասնակիորեն՝ դրվել են տրական հոլովով և գործածվել չեզոք սեռի նշանակությամբ: Իսկ «Թևով դիպավ ավերակ

պատին ու փլցրեց մի շերտ, որ *խանգարում էր նրա երթը...*» [3, էջ 484], «... Լսարանի մյուս ծայրը պոկեցինք ցցից՝ մեր *ձեռքը վնասելով* ու արյունը ծծելով» [4, էջ 261] նախադասություններում հիշյալ բայերը հանդես են գալիս գործողության լիակատար անցման նշանակությամբ՝ ամբողջովին առնչվելով առարկային, ուստի խնդիրն արտահայտված է հայցական հոլովով՝ գործածվելով ներգործական սեռի նշանակությամբ:

Կան մի քանի բայեր էլ, որոնցում գործողության անցման մասնակի և լիակատար նշանակությունը կարող է արտահայտվել նաև ոչ անմիջական խնդրառությամբ, այսինքն՝ կապով և հոլովաձևով: Խնդրառության մասնակիությունը դրսևորվում է *մասին*, երբեմն նաև *վրա* կապերի կիրառությամբ, ինչը հանդիպում է ասացական, իմացական և նման կարգի մի քանի բայերի հետ՝ *վկայել, ճառել, չարախոսել, գրաբանել, պերճախոսել, ճամարտակել* և այլն: Օրինակ՝ «Պատմության փոշեպատ խորքերից հանում էր դեմքեր, որոնց ստույգ լինելու մասին ծերունի մատենագիրն է *վկայել*» [3, էջ 20]: «Շատ օտարականներ են *վկայել* նրա պատմելու *արվեստը*» [3, էջ 404]: Ըստ Ա. Աբրահամյանի՝ նման կիառությունները հետևանք են սեռի հետ կապված որոշ հանգամանքների, «որոնք նշված խնդրառության հետ հիմք են ծառայում սրանց մեջ չեզոք սեռի հատկանիշը ներգործականի հետ ընդունելու համար» [1, էջ 714]:

Ժամանակից հայերենի կրկնասեռության դրսևորումներից մեկը պայմանավորված է լծորդության պատմական փոփոխությամբ: Արդի հայերենում կան ե խոնարհման մի շարք բայեր, որոնք այժմ նույն լծորդությամբ ունեն սեռային զուգահեռություն: Այդ բայերի չեզոք նշանակությունը արտահայտվել է ի լծորդությամբ, այժմ այդ լծորդությունը վերացել է, իսկ բայերը ե լծորդությամբ ներգործականի հետ պահպանում են չեզոք սեռի քերականական նշանակությունը, և ի հայտ է գալիս կրկնասեռության երևույթը: Օրինակ՝ անցյալում *մարել, երկարել, մեղմել, խամրել, խռովել* և այլ բայեր ձևով եղել են ներգործական, բայց ի լծորդությամբ գործածվելիս՝ *մարիլ, երկարիլ, մեղմիլ, խամրիլ, խռովիլ*, դրսևորել են չեզոք սեռի իմաստ: Ներկայումս այս նույն բայերը ե լծորդությամբ հանդես են գալիս թե՛ ներգործական, թե՛ չեզոք սեռի կիրառությամբ, ինչպես՝ «... *Ձեռքը* մեղմ *երկարում էր*, մեկ հատիկ մոռ վերցնում...» [4, էջ 256]: «Իմ աչքերի մեջ այնքան *կրակներ են մարել* ես Եվ հոգուս մեջ, հուսահատ, այնքան *աստղեր են մարել*» [5, էջ 300]: Այս նախադասություններում *երկարել* և *մարել* բայերը գործածվել են ներգործական սեռի նշանակությամբ, մինչդեռ «Պատահում էր, որ ուսանողների խրախճանքը *երկարում էր*» [3, էջ 275], «Եվ կարոտը *մարեց* իմ հոգում այնպես, ինչպես առաջացել էր» [3, էջ 19] նախադասություններում նշված բայերն ունեն չեզոք սեռի իմաստ: Ուստի այս և նման մի շարք բայեր, ներգործական և չեզոք սեռերի նշանակությամբ գործածվելիս, չունենալով լծորդության որևէ փոփոխություն, նույնպես ցուցաբերում են կրկնասեռության երևույթ:

Ժամանակակից հայերենում կան նաև մի քանի բայեր, որոնք լծորդության տարբերություններով ունեն սեռային տարբերություններ՝ ա լծորդությամբ չեզոք, ե լծորդությամբ՝ ներգործական, ինչպես՝ *թվալ//թվել, ծփալ//ծփել, ծխալ//ծխել, երերալ//երերել* և այլն: Այսպես՝ «Այդ միտքը մեզ տեղնուտեղը անլուրջ *թվաց*» [4, էջ 254]: «Հեռվի փոքրիկ սարահարթին *ծխում էր* ուրթը» [4, էջ 171]: «Դողում էին ձեռքերը, աշնան տերևի պես *երերում էր* թուղթը հին» [3, էջ 47]: Այս օրինակներում *թվալ, ծխալ, երերալ* բայերը չեզոք սեռի են, իսկ *թվել, ծխել, երերել* բայերը հետևյալ նախադասություններում արդեն հանդես են գալիս ներգործական սեռի նշանակությամբ, ինչպես՝ «Ես մինչև այժմ էլ հիշում եմ նրա խոսքը, երբ մեկ-մեկ *թվեցի* մեր տղաների *անունները*» [4, էջ 215]: «Կապույտ *մշուշ էին ծխում* հեռու անտառները...» [4, էջ 314]: «... Պետին *զլուխը երերում էր* և ինքն իրեն խոսում» [3, էջ 57]:

Այսպիսով՝ ժամանակակից հայերենի կրկնասեռությունը պայմանավորված է ոչ միայն իմաստաբանության, այլ նաև ձևաբանության և շարահյուսության ոլորտներով, քանի որ այն առնչվում է անցողականությանը և անանցողականությանը, առաջադրում գործողության և խնդրի հարաբերությունը, ինչն էլ հիմք է տալիս առանձնացնելու կրկնասեռության իմաստային և քերականական դրսևորումները՝ կապված խնդրառությանը և լծորդության փոփոխությանը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ա.Ա., Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962:
2. Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ս., Օհանյան Հ.Ա., Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974:
3. Բակունց Ա., Երկեր չորս հատորով, հտ. 1, 2, 3, Երևան, 1976, 1979, 1982:
4. Մաթևոսյան Հ., Երկեր երկու հատորով, հտ. 1, 2, Երևան, 1985:
5. Չարենց Ե., Պոեմներ, բանաստեղծություններ, Երևան, 1984:

#### РЕЗЮМЕ

##### Проявление двойного залога в современном армянском языке Кристина Григорян

**Ключевые слова:** двузалоговые глаголы, активный залог, средний залог, признак переходности, признак непереходности, залоговые сдвиги, залоговые параллели

Двойной залог обусловлен историческим развитием языка, является исторически изменяющейся категорией и имеет различные проявления в различные периоды времени. Определяя его, следует принимать во внимание конкретный период развития языка, поскольку какой-либо глагол с двойным залогом может потерять один из критериев залога в прошлом, становясь впоследствии однозалоговым, и наоборот – глагол двойного залога может быть однозалоговым в прошлом. Существуют также глаголы которые сохранили двузалоговость по сей день.

#### SUMMARY

##### The Double Voice in the Modern Armenian Language Qristine Grigoryan

**Keywords:** double voice verbs, active voice, middle voice, transition mark, non-transition mark, voice changes, voice parallels

The double voice is conditioned by the historical development of the language, it is a historically changing category and has different manifestations in different periods of time. Defining it, one should take into account the particular period of language development, because any double voice verb may lose one of the voice criteria in the past, becoming subsequently monovoiced and vice versa – a double voice verb may be monovoiced in the past. There are also verbs that have preserved the double voice phenomena to this day.